Կապան մասնաճյուղի կառավարիչ

Աշխատանքի նկարագրություն

Կազմակերպում, կոորդինացնում մասնաճյուղի աշխատակիցների գործունեությունը:

Աշխատանքային պարտականություններ

- Իրագործում է Բանկի սահմանած քաղաքականությունը մասնաճյուղի գտնվելու տարածաշրջանում
- Կազմակերպում, կոորդինացնում և վերահսկում է մասնաճյուղի աշխատակիցների ընթացիկ աշխատանքները՝ ապահովելով դրանց արդյունավետությունը և անընդհատությունը
- Իրականացնում է անհրաժեշտ միջոցառումներ՝ մասնաճյուղի բիզնես պլանի, պորտֆելների, վաճառքների և այլ պլանների կատարման համար, մասնավորապես՝ աշխատավարձային նախագծերի ներգրավում, պրեզենտացիաների անցկացում, հիմնական, խաչաձև և հեռախոսային վաճառքների կազմակերպում
- Շաբաթական պարբերականությամբ կատարում է փաստացի կատարված և ակնկալվող վաճառքների կատարողականի վերլուծություն՝ ձեռնարկելով միջոցառումների վաճառքի պլանների կատարման ուղղությամբ
- Մասնակցում է բանկոմատների լիցքավորման և լիցքաթափման գործընթացին և ապահովում ծրագրային հաստատում
- Վերահսկում է մասնաճյուղի աշխատողների կողմից պաշտոնեական պարտականությունների կատարումը, աշխատանքային և կատարողական կարգապահությունը
- Հետևում է մասնաճյուղի և աշխատակիցների համար սահմանված ստանդարտների (սպասարկման որակ, արտաքին տեսք և այլն) պահպանմանը

Անհրաժեշտ պահանջներ

- Բարձրագույն կրթություն
- Առնվազն երկու տարվա աշխատանքային փորձ ֆինանսաբանկային համակարգում
- Ֆինանսական վերլուծության գերազանց իմացություն
- Բանկային գործունեությունը կարգավորող օրենսդրության իմացություն
- Հաշվապահական հաշվառման իմացություն
- Առաջնորդության հմտություն
- Հաղորդակցության հմտություն
- Հայերենի գերազանց տիրապետում
- Ռուսերեն և/կամ անգլերեն լեզուների իմացություն

Դիմելու ընթացակարգը

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը hr@armbusinessbank.am հասցեին:

Վերջնաժամկետ՝18.10.2023թ.:

Խնդրում ենք նամակի թեմա (subject) դաշտը լրացնել նշելով պաշտոնը և Ձեր անուն, ազգանունը հետևյալ կերպ՝ "**Kapan Branch Manager – Name, Surname**":